և երդնում 'ի վերայ Սուրբ կտակարանիս, որ եմ ծնունդ սեպհական ազգէն հայոց, հաւատացեալ 'ի Քրիստոս աւանդութեամբն հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ, և փոխանորդ հայոց 'ի աշխարհին Նախիջևանայ, խոստանամ առաջի յԱստուծոյ և ձեր եղբարք, զի կալով մնասցեմ հաստատուն 'ի վերայ այսմ հաւատոյս և սիրոյ 'ի վերայ ազգին իմոյ և հնազանդ Օրինացն կարգադրութեան տանն Հայոց զամենայն աւուրս կենաց իմոց։

Վկայեմք, որ երդմնեաց Միքայէլ Մեղրու։ ○
և ձեռնադրեաց.
Շմաւոն Գծագիր. ○

Օրինակ առաջին նամակին պատօնատարութեան 'ի տանէն Հայոց, որ պարտ է ելանել 'ի Հայրախնամ Հօրէ Հայաստանեաց։

ԳԼՈՒԽ Խ.

Տեսանելով մեր նամակ Օրհնութեան և պաշտօնի տեղակալութեան Սրբազան Տեառն Մարտիրոս Հայրապետի ամենայն Հայոց հանդերձ Սրբակրօն Եպիսկոպոսիք ընդունելութիւն փոխանորդութեան քոյ, տալով նոքայ իշխանութիւն քեզ տեղի տեղակալութեան իւրեանց և քեզ երդմնելով առաջի աստենի մերոյ 'ի վերայ Սուրբ կտակարանի հաստատեցաք 'ի միտս մեր հաւա-